ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ merdzavan.armavir @ mta.gov.am

03.05.2016թ.
թիվ 96

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի 1-ին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2016 թվականի ապրիլ ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր 4 /չորս/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

1 ապրիլի 2016 թվականի N26-Ա

<<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ՏՆՕՐԵՆ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի առաջին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Վարչական սարքավորումներ>> հոդվածով նախատեսված գումարից 2016 թվականի մարտի 31-ին ձեռք բերված 96 000 ՀՀ դրամ արժողության <<ZT-120>> մակնիշի հասակաչափով բժշկական կշեռքը նվիրել <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ և օրենքով սահմանված կարգով ՀՈԱԿ տնօրեն Գայանե Սարգսյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2016 թվականի ապրիլի 1

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի 2016 թվականի N27-Ա

<<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ՏՆՕՐԵՆ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի առաջին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Վարչական սարքավորումներ>> հոդվածով նախատեսված գումարից 2016 թվականի ապրիլի 12-ին ձեռք բերված 120 000 ՀՀ դրամ արժողության MAXJ 1812 մակնիշի նվագարկիչը <<USB>> բարձրախոսով և 30 000 ՀՀ դրամ արժողության SHure SH 200 խոսափողը նվիրել <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ և օրենքով սահմանված կարգով ՀՈԱԿ տնօրեն Գայանե Սարգսյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2016 թվականի ապրիլի 13

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

27 ապրիլի 2016 թվականի N28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի ժա) ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի N633-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի ապրիլի 25-ի N 01/20/1455-16 գրությունը, **որոշում եմ.**

1. Հաստատել Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2015 թվականի փետրվարի 18-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը հաստատելու մասին>> N17-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի ապրիլի 27

գ.Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

14 ապրիլի 2016 թվականի N6-Ա

ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի է) ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335-Ն որոշման դրույթներով, **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հրանտուհի Գևորգյանին 2016 թվականի ապրիլի 14-ին գործուղել քաղաք Արմավիր՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին՝ /Սուսաննա Դավթյանին/ գործուղման ծախսերի հատուցումը կատարել ներկայացված գործուղման վկայականների հիման վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2016 թվականի ապրիլի 14

գ. Մերձավան